ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 30

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ 23.123.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ-10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման Մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արևշատ համայնքի ավագանու հերթական թիվ-10 նիստի օրակարգը:

1. Արևշատ համայնքի 2021թվականի ,, Տեղական Տուրքերի և Վճարների դրույքաչափերի սահմանման մասին:

2. Արևշատ համայնքի ղեկավարի աշխատավարձի ,համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման և Արևշատ համայնքի ավագանու 20 դեկտեմբերի 2019թվականի թիվ-33 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

3. Արևշատ համայնքի 2021 թվականի բյուջեի հաստատման մասին:

4. Արևշատ համայնքի բնակիչներին գույքահարկի արտոնություն տալու մասին:

5. Համայնքապետարանի և նրա տրամադրության տալ գտնվող հիմնարկների գույքագրման մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼՅՈՒԴՎԻԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 31-Ն

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավրման Մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-որ և 19-րդ կետերով , ,, Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ , 10-րդ ,11-րդ ,13-րդ 14-րդ հոդվածներով

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Արևշատ համայնքի 2021 թվաքկանի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼՅՈՒԴՎԻԳ ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 1
Արևշատ համայնքի ավագանու
23 -ը դեկտեմբերի 2020թ.
թիվ 31-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզիԱրևշատ համայնքում սահմանվում են 2020թ. տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչ և 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ - 7.500 դրամ.

բ. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15.000 դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25.000 դրամ.
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25.000 դրամ.
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50.000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1.500 դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2.500 դրամ.

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1.500 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի՝ 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2.500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60.000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30.000 դրամ.

6)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4500 դրամ.
- 26-ից մինչև 50քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500 դրամ.
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6600 դրամ.
- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000դրամ.
- 200 -ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13.000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 24.000 դրամ:

բ. ծխախոտի արտադրանք վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչ 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 4500 դրամ,
- 26-ից մինչև 50քմ.ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500 դրամ,
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6600 դրամ,
- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝11000 դրամ,
- 200-ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 24.000 դրամ:

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5500 դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7600 դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000 դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից 1500 դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.500դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.500 դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000դրամ.

9) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1.050 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝600 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

10). Հայաստանի Հանրապետության Արևշատ համայնքի անվանումը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

11). համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3.000 դրամ:

2.Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.5 գործակցի կիրառմամբ, իսկ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ, կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.3 գործակցի կիրառմամբ:

3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնքի 2020 թվականի տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո, շենքերի և շինությունների/ այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականոցումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը , ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 դրամ.

2) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման

ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ.

3) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 7500 դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 1000 դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 2000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին /վերնիսաժներին/ մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 1500 դրամ.

6) Արնշատի մանկապարտեզիծառայություններից օգտվողների համար համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար համայնքի երեխաների համար վճարի չափ սահմանել ամիսը 6000 հազար դրամ :

7.Արնշատի երաժշտական դպրոցի ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար համայնքի երեխաների համար վճարի չափ սահմանել 7000հազար դրամ

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 դրամ փոխհատուցման վճար.

9) համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100 դրամ.

Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 1.000 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար 4 000 դրամ, իսկ համայնքում

10).իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել յուրաքանչյուր ամսվա համար հետևյալ սակագներով՝

ա.առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողների համար – 25 դրամ /1քառ.մ./.

բ.արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար - 5դրամ /1քառ.մ/.

գ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար – 3 դրամ /1քառ.մ./.

11). համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայություններից օգտվելու համար սահմանել հետևյալ վճարները՝

1. կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն - 500 դրամ.

2. ծննդօգնություն՝

2.1. թեթև միջամտություն -1.000 դրամ.

2.2. ծանր միջամտություն -5.000 դրամ.

3.արյուն առում կամ այլ նմուշ առում՝ մանր կենդանի-100դրամ, խոշոր կենդանի - 200դրամ, բացառությամբ <<Գյողատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների.

4.կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար - 200դրամ.

5.ախտահանություն -1 քմ 200 դրամ.

6.միջատազերծում(դեզինսեկցիա) - 1 քմ 100 դրամ.

7.կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) -1 քմ 200 դրամ.

8.արհեստական սերմնավորում -5.000 դրամ.

9.կենդանու հերձում՝ մանր կենդանի -1.000դրամ,

խոշոր կենդանի -3.000դրամ.

10. կենդանու բուժում՝ կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը մանր կենդանի -1.000 դրամ,

խոշոր կենդանի -2.000դրամ.

11. կենդանիներին ախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝

մանր կենդանի-1.000 դրամ,

խոշոր կենդանի-2.000դրամ.

12.կենդանիների հետսպանդային զննում (մինչև 2020թ.հուլիս ամիսը)՝

մանր կենդանի -1.000 դրամ,

խոշոր կենդանի -2.000դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Է. Փորթուգալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 32_Ն

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ--33-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավրման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ,28-րդ կետերին համապատասխան և ,, Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Արևշատ համայնքի ղեկավարի աշխատավարձը՝ 330000/ երեք հարյուր երեսուն հազար/ դրամ :

2. Հաստատել Արևշատի համայնքապետարանի աշխատակազմի ,բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն 1.2. 3-րդ հավելվածների :

3.ՈՒԺը կորցրած ճանաչել Արևշատ համայնքի ավագանու 20 դեկտեմբերի 2019թվականի ,, Արևշատ համայնքի ղեկավարի. համայնքապետարանի աշխատակազմի , բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստաելութիվ-33 -Ն որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼՅՈՒԴՎԻԳ ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 1.

Արևշատ համայնքի ավագանու

2020թ դեկտեմբերի 23 ի թիվ-32Ն որոշման

2020ԹՎԱԿԱՆԻ ԱՐԵՎՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12 /2020/

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	2019Թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ դրամ/
1.Համայնքի ղեկավար		330000
Հայեցողական պաշտոններ		
2. Համայնքի ղեկավարի օգնական	0.5	90000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
3.Համայնքպետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1.0	265000
4. Համայնքպետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1.0	245000
5.Համայնքպետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1/	թափուր	161000
6.Համայնքպետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1.0	160000
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
7.Գրադարանավար.և մշակույթի տան տնօրեն	1.0	95000
ՏԵԽՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
8.Մշակույթի տան պահակ	1.0	100000
9.Հավաքարար	1.0	100000
10.Կատարացու/ վարորդ	1.0	95000
11.Գործավար	0.5	68000
12. Անասնաբուժ	0.5	45000

Աշխատակազմի քարտուղար Է. Փորթուգալյան

Հավելված 2.

Արևշատ համայնքի ավագանու

2020թվականի դեկտեմբերի 23-ի թիվ-32-Ն որոշման.

2020Թ-Ի ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ 12

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	*ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)*
Տնօրեն	1.0	180000
Դաստիարակ	0.56	73000
Դաստիարակ	0.56	78000
Դաստիարակ	0.56	78000
Դաստիարակ	0.56	78000
Երաժ. դաստիարակ	0.5	73000
Դաստիարակի օգնական	1.0	90000
Դաստիարակի օգնական	1.0	93000
Խոհարար,	1.0	90000
Տնտեսվար /օժանդակ բանվոր/	1.0	93000
Պահակ	1.0	73000
Հաշվապահ	0.5	80000

Աշխատակազմի քարտուղար՝ Է. Փորթուգալյան

Հավելված 3

Արևշատ համայնքի ավագանու

2020թվականի դեկտեմբերի 23-ի թիվ-32 -Ն որոշման.

2020Թ-Ի ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԺՇԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ 14		
Երժշտական դպրոցի տնօրեն տնօրեն մասնագիտական	1.0 0.4	100000 36000
Ուսմասվար մասնագիտական քանոն	0.5 0.7	45000 63000
Դաշնամուր	1.3	117000
Դաշնամուր	1.5	139500
Դուդուկ	0.7	65100
Երգչախումբ	1.5	137175
Տեսություն /սոլֆեջո/	1.5	135000
Շվի	1.3	120900
Վոկալ	1.15	103500
Քամանչա	0.82	74250
Դհոլ	1.5	139500
Ջութակ/ալտ	0.9	83700
Հաշվապահ	1.0	90000
Հավաքարար	0.8	73000

Աշխատակազմի քարտուղար՝ Է. Փորթուգալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 33-Ն

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման Մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արևշատ համայնքի 2021 թվականի բյուջեն :

Համաձայն հավելված 1-ի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼՅՈՒԴՎԻԳ ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 1

Արևշատ համայնքի ավագանու
2020թվականի դեկտեմբերի 23-ի
Թիվ-33-Ն որոշում

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ

Ղեկավարվելով „ Տեղական Ինքնակառավարման Մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արևշատ համայնքի 2021թվականի բյուջեն

Եկամուտների գծով՝ 78972.0 դրամ:
Ծախսերի գծով՝ 78972.0 դրամ:
Դոտացիա՝ - 45103.5հազար դրամ:
Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ եկամուտների տեսակների՝

1. Հարկային եկամուտներ՝ 17740.9 հազար դրամ:
   - հողի հարկ - 7031.2հազար դրամ:
   - գուքահարկ - 10361.7 հազար դրամ:
   - տեղական տուրքեր – 348.0 հազար դրամ:
2. Ոչ հարկային եկամուտներ՝ 1153.6. հազար դրամ:
   - վարձակալական հողերի
     վարձավճար - 243.6 հազար դրամ:
   - համայնքի սեփականություն.
     հանդիսացող գուքի վարձ.- 910.0 հազար դրամ:
3. Հողի օտարումից մուտք --
4. Դոտացիա - 45103.5 հազար դրամ
5. .Սուբվենցիա -- 3734.0 հազ. դրամ
6. Տեղական վճարներ 11240.0 հազար դրամ
   Այդ թվում՝
   Մանկապարտեզի Ծնողական վճարներ - 3600.0 հազ.դրամ
   Երաժշտական դպրոցի Ծնողական վճարներ -- 5000.0 հազ դրամ
   Աղբահանության վճարներ -- 2640.0.0 հազ դրամ
7. Տարվա սկզբի տմնացորդ վարչական բյուջե
   Ֆոնդային բյուջե

Հաստատել Արևշատ համայնքի 2021 թվականի բյուջեից հատկացումները ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման հետևյալ չափերով:

1. Կառավարման ապարատ - 22332..0 հազար դրամ:
2. Մանկապարտեզ - 17200.0 հազար դրամ:

3. Երաժշտական դպրոց - 12260.0 հազար դրամ:

4. Աղբահանում - 2800.0 հազար դրամ:

5. Մշակույթ - 2490.0 հազար դրամ:

6. Ընդհ. բնույթի այլ ծառայ 8730.0 հազար դրամ

7 Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ –9426.0 հազար դրամ

7. 8.Սուբվենցիա - 3734.0 հազար դրամ

Հաստատել սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծառայությունները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածները կից հիմնավորումներով:

1. Կառավարման ապարատի ծախսը 2019 թվականի բյուջեով նախատեսված է՝ 18884.0 հազար դրամ:

4111 - 19800.0 հազար դրամ: աշխատավարձ
4212 - 70.0 հազար դրամ: գազ
4213 - 100.0 հազար դրամ: Խմելու ջուր և դեռատիզացիա:
4214 - 96.0 հազար դրամ: Ինտերնետ կապ:
4215 - 20.0 հազար դրամ: Ծառ.և բեռ. ավտոմեք. ապահովագր.:
4234 - 190.0 հազար դրամ: Թերթերի բաժանորդագրություն:
4241 - 150.0 հազար դրամ: Գազի տեխ. սպասարկ. և հրշեջ ծառ,արխիվ
4231 - 400,0 հազար դրամ Վարչական ծառայություն
4261 - 260.0 հազար դրամ: Գրենակ. և գրասենյակ. պիտույքներ:
4264 - 500.0 հազար դրամ: բենզին:
4267 - 8 0.0 հազար դրամ: Տնտ. և մաքրիչ նյութեր:
4232 - 160.0 հազար դրամ Համակարգչային ծառ.

4252 - 150.0 հազար դրամ Մեքե. և սարքաքվ. Ընթացիկ նորոգում.

4269 - 250.0 հազար դրամ Հատուկ նպատակ նյութեր

Մանկապարտեզին 2021 թվականի բյուջեով նախատեսված է ծախս՝ 17200.0հազար դրամ:

09.01.01.51
4511 - 17200.0 հազար դրամ: Աշխատավարձ, սնունդ, տնտ., գույք, ուսումնակ., գրենական, մաքրիչ նյութեր

2. Արևշատի երաժշտական դպրոցին 2021 թվականի բյուջեով նախատեսված է ծախս՝ 12260,0 հազար դրամ:

09.05.01.51
4511 - 12260.0 հազար դրամ: Աշխատավարձ, էլ. էներգիա, տնտ. և գրենակ:

Այլ ծրագրեր

- 06.05.01.52 - Արտաքին ցանցի լուսավորության անցկացում և շահագործում

4212 - 1600,0 հազ. դրամ: Էլ էներգիայի գումար.

4251 - 500.0 հազ. դրամ Արտաքին ցանցի լուսավորության ընթացիկ նորոգում

05.01.01.51 – 1550.0 Աղբահանություն և սանիտարական մաքրում:

4213 -- 2800.0հազար դրամ

- 04.05.01.59 - 800.0հազ.դրամ Փողոցների պահպանում և շահագործում

4251 - 960.0 հազ. դրամ փողոցների խճապատում

Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ

01.06.01.60 - 350.0 հազար դրամ. Գույքի նկատմամբ իրավունքի գրանցման

4241 - 100.0 հազար դրամ Հողերի չափագրում.
4823 - 150.0 հազար դրամ Հողերի սեփականության վկայակ. ձեռք բերում

4819 - 100.0 հազար դրամ: Համայնքների միության անդամավճար:

- 05.04.01.55 -100.0 հազար դրամ կենսաբազմազանության և բնության պաշտպանության

4239 - 100.0 հազար դրամ. Կարկտահարություն. Գյուղատնտեսական խորհրդատվություն.

08.02.05.52 Թաթերական ներկայացումներ

4239- 100.0հազար դրամ

- 08.02.04.51 – 2490..0 հազ. Դրամ Մշակույթային միջոցառումների իրականացում
4111 – 2340.0. հազար դրամ Աշխատավարձ

4269 - 150.0 հազար դրամ նվերներ տարբեր տոնակատար.նպատակով

10.07.01.55 - 80.0 հազ դրամ Հասարակական կազմակերպ. աջակցություն

4819 – 80.0 հազար դրամ .վետերանների հիմնադրամին

10.07.01.54 – 3700.0 հազ դրամ Սոց անապահով ընտանիքներին աջակցություն

4729 - 2800.0 հազար դրամ սոց. Անապահով անձանց ֆին աջակցություն.

4726 - 700.0 հազար դրամ Հուղարկավորության նպաստ

4239 – 200.0 պսակների համար

- 04.05.01.58 - մայրուղիների և փողոցների պահպանում և շահագործում
- 4251 -990.0 հազար դրամ

4511 - 3734.0 հազար դրամ: Երաժտական դպրոցի ազգ. Լարային նվագարաներ.

4 .Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը կազմում է 9676.0հազար դրամ:

Աշխատանքային խմբի ղեկավար Է. Փորթուգալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 34

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ;

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման Մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի ,,Գույքահարկի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով և Հայաստան Հանրապետության Կառավարության 2012թվականի հունիսի 22-ի թիվ-822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

Համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի արտոնություն:

Մամիկոնյան Սամվել - շինության գույքահարկ 130000/ հարյուր երեսուն հազար/ դրամ

Սիմոնյան Ավագ - շինության գույքահարկ 135000/հարյուր երեսունհինգ հազար/ դրամ

Նիկոլյան Ռոզա - ավտոգույքհարկ ՕՊԵԼ 58000 /հիսունութ հազար դրամ/

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼՅՈՒԴՎԻԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 35

ԱՐԵՎՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման Մասին,, Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32 -կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արևշատի համայնքապետարանի և նրա տրամադրության տակ գտնվող հիմնարկների գույքագրման արդյունքները համաձայն հավելվածների :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼՅՈՒԴՎԻԳ ՊՈՂՈՍՅԱՆ